ԱՆԳԼՈ-ՍԱՔՍՈՆԱԿԱՆ ԵՎ ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍՈՎ*

Ա. Լ. ԱՍԱՏՐՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ փաստաբանական պալատի նախագահի առաջին տեղակալ

ՆԱԽԱԲԱՆ

Ներկայումս մեր տարածաշրջանում և աշխարհում ընթացող ռազմաքաղաքական զարգացումները պետություններից պահանջում են վերանայել իրենց անվտանգային ճարտարապետությունը: Այս իրողության հաշվառմամբ մեր հանրապետությունում ձեռնարկվում են անվտանգության ոլորտի լայնածավալ բարեփոխումներ, որոնք խարսխվում են ներպետական իրավունքի նորմերի վրա: Դա նշանակում է, որ անվտանգության ոլորտի բարեփոխումները պարտադիր կերպով պետք է ուղեկցվեն բարեփոխումներով նաև իրավական դաշտում[1]:

«Անվտանգության» գաղափարն անխզելի է մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորված ապահովման և անխոչընդոտ իրացման սկզբունքներից, և դրա օբյեկտիվ պատճառն այն է, որ իրավունքը կատարում է հասարակական հարաբերությունների կարգավորման, դրանց կայունացման առանցքային գործառույթ, ինչը պետության ու հասարակության անվտանգության, կենսագործունեության ու բնականոն զարգացման պարտադիր պայման է: Այս առումով իրավունքի տեսությամբ առաջ է քաշվում *իրավական անվտանգության* հասկացությունը, որը հնարավոր է մեկնաբանել և՛ բնական իրավունքի տեսանկյունից, և՛ որպես իրավական համակարգի տարր[2]:

Ժամանակակից տեսություններում իրավական անվտանգությունը սահմանվում է որպես ազգային անվտանգության ապահովման մեխանիզմ, իրավական գործունեության միջոցով մարդու, հասարակության և պետության իրավունքների պաշտպանվածության վիճակ[3]: Իրավական պաշտպանվա-

* Հոդվածն ստացվել է 13.03.2023: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 29.05.2023:

[1] Տես *Ա. Ս. Նազարյան,* Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումների հիմնական ուղղությունները բանակաշինության արդի փուլում: «ՀԲ», 2008, հմ. 2–3:

[2] Տես *Ch. B. Ivaylova.* Legal Security as a Principle in Lawmaking. “Globalization, the State and the Individual”, 2017, N 2(14):

[3] Տես *Д. А. Липинский, А. А. Мусаткина.* Юридическая ответственность и без-

ծության վիճակի ապահովումն ունի այնպիսի տեխնիկական-որակական առումներ, ինչպիսիք են իրավաստեղծման, իրավակիրառման, իրավունքի հաստատման գործընթացներում քաղաքակրթական, գաղափարական և բարոյական հիմքերի հաշվառումը, օրենսդրական կամայականությունների և հակասությունների բացառումը, բարձր իրավական մշակույթի զարգացումը, սահմանադրականության ապահովումը, ազգային իրավական համակարգի՝ նոր իրողություններին համահունչ և միջազգային իրավունքին ներդաշնակ զարգացումը:

Արդի աշխարհում ինտեգրումային գործընթացների ակտիվացումը, վերազգային հաստատությունների դերի շարունակական մեծացումն ու տնտեսության միջազգայնացումը պահանջում են պետություններում ձևավորել կենսունակ և անվտանգ իրավական մթնոլորտ, ինչն էլ իր հերթին անհրաժեշտ է դարձնում ազգային իրավունքի առջև ծառացած տեսական ու կիրառական խնդիրների դիտարկումը իրավունքի օտարերկրյա դրական փորձի ուսումնասիրության լույսի ներքո:

Իրավական համակարգերը և դրանց դասակարգման սկզբունքները. Ժամանակակից իրավունքի տեսություններում ազգային իրավական համակարգերի կատարելագործման խնդիրը դիտվում է համեմատական իրավունքի դաշտում: Համեմատական իրավունքն զբաղվում է իրավական համակարգերի նմանությունների և տարբերությունների, փոխներգործությունների և զարգացման օրինաչափությունների հայտնաբերմամբ, բացատրմամբ ու գնահատմամբ[4]: «Իրավական համակարգ» տերմինը իրավունքի տեսություններում օգտագործվում է տարբեր իմաստներով: Նեղ ընկալմամբ դա «ազգային իրավական համակարգն» է, լայն ընկալմամբ՝ «իրավական համակարգերի ընտանիքը»[5], կամ ֆրանսիացի համեմատաբան (կոմպարատիվիստ) Ռ. Դավիդի ձևակերպմամբ՝ «իրավունքի ընտանիքը», այնպիսի նմանատիպ իրավական հատկանիշներ ունեցող իրավական համակարգերի խումբ է, որոնք իրավունք են տալիս խոսելու համակարգերի հարաբերական միասնության մասին[6]: Ազգային իրավական համակարգերի ուսումնասի-

ответственность, правовая и национальная безопасность: проблемы соотношения и системных связей. «Юридическая наука и правоохранительная практика», 2019, № 4 (50):

[4] Տես *R. Michaels.* Comparative Law. “Oxford Handbook of European Private Law“ (https: // scholarship.law.duke.edu / cgi / viewcontent.cgi?article=3014&context=faculty_scholarship):

[5] Տես *M. Pargendler.* The Rise and Decline of Legal Families. “The American Journal of Comparative Law”, 2012, Vol. 60 (https://law.stanford.edu/wp-content/uploads/sites/default/files/publication/701352/doc/slspublic/Pargendler%20Rise%20and%20Fall%20of%20Legal%20Families%2060AmJCompL1043.pdf); *Husa Jaakko.* Classification of Legal Families Today. Is it time for a memorial hymn? “Revue internationale de droit comparé”, 2004, Vol. 56, N 1 (https://www.persee.fr/docAsPDF/ridc_0035-3337_2004_num_56_1_19249.pdf):

[6] Տես *R. David.* Les grands systèmes de droit contemporains (droit comparé). Revue internationale de droit comparé. Année 1965, Vol. 17, N 1 (https://www.

ությամբ ստացված հսկայական փաստագրական հենքի վրա 20-րդ դարի երկրորդ կեսին համեմատաբաններին հաջողվել է որոշակիորեն դասակարգված կերպով ներկայացնել աշխարհի իրավական պատկերը: Արևմտյան համեմատական իրավունքում դասակարգումների հիմքում դրվել են երեք հիմնական խումբ չափանիշներ, մասնավորապես՝ իրավունքի կառուցվածքը, իրավունքի տեխնիկան, իրավական գաղափարախոսությունն ու մտածողության ձևը (Ռ. Դավիդ), իրավունքի ոճը, դատավարական իրավունքի փիլիսոփայությունը, իրավական ենթակառուցվածքը, դատական համակարգի ճարտարապետությունը (Մ. Գլենդոն, Մ. Գորդոն, Կ. Օսակվե), իրավունքի սահմանակարգի ձևավորման ու զարգացման պատմական առումը, իրավունքի աղբյուրը (ծագումը) ու գործառնումը (Կ. Ցվայգերտ, Հ. Կյոց): Ըստ այդմ կարելի է փաստել, որ ժամանակակից հասարակություններում գործում են իրավունքի հետևյալ հիմնական «ընտանիքները»*.

Անգլո-սաքսոնական (ընդհանուր) իրավունքի ընտանիքում իրավունքի հիմնական աղբյուրը** դատավորների ձևավորած դատական նախադեպն է, ինչպես նաև օրենսդրական ստատուտը, ընդ որում, դատավորն ունի ցանկացած առանձին դեպքի առնչությամբ այն մեկնաբանելու իրավունք[7]: Այսինքն՝ դատավարությունն ինքնին դառնում է իրավունքի աղբյուր, և կայացված որոշումը ձևավորում է նախադեպային իրավունք, որի առանցքում գտնվում է «արդարության իրավունք»-ի *("law of equity")* սկզբունքը: Անգլո-սաքսոնական իրավունքի ավանդույթներով են գործում ԱՄՆ-ը (բացառությամբ Լուիզիանա նահանգի), Միացյալ Թագավորությունը (բացառությամբ Շոտլանդիայի), Կանադան, Ավստրալիան, Նոր Զելանդիան և այլ պետություններ[8]: Այս պետություններում դատական իշխանությունը իշխանության մյուս ճյուղերի համեմատությամբ ունի շատ մեծ աստիճանի անկախություն:

Ռոմանագերմանական (մայրցամաքային) իրավունքը ծագել է հռոմեական «Քաղաքացիական իրավունքի ժողովածու»-ի (*Corpus Juris Civilus*-ի)

---

persee.fr/doc/ridc_0035-3337_1965_num_17_1_14146); *Jean-François Gerkens.* Leçons de droit privé comparé, Chap. 3: "Les familles juridiques du monde", 15.10.2004 (https://dpc.droit.uliege.be/jcms/service/uca0045/04_Les_familles_juridiques.pdf); *René David and John E.C. Brierley.* Major legal systems in the world today. "Journal of the Indian Law Institute", July-September 1979, Vol. 21, N 3 (https://sci-hub.se/https://www.jstor.org/stable/43950645):

* Ստորև բերված դասակարգումը նույնական է ԱՄՆ-ի Արդարադատության գերատեսչության կատարած դասակարգման հետ (տես "International Legal Systems – An Introduction". United States Department of Justice (https://www.justice.gov/archives/nsd-ovt/page/file/934636/download)):

** Տվյալ դասակարգման մեջ իրավունքի աղբյուրի նշումը պայմանավորված է այն բանով, որ ցույց է տրվում աղբյուրի և «իրավունքի գերակայության» միջև կապը:

[7] Տես նույն տեղում:

[8] Տես "Common Law Systems and Mixed Systems with a Common Law Tradition". World Legal Systems Research Group, University of Ottawa (http://www.juriglobe.ca/eng/sys-juri/class-poli/common-law.php):

նորմերի հիման վրա: Իրավունքի հիմնական աղբյուրը գրված օրենքն է *(Raison écrite),* գործում է ժամանակակից ավելի քան 150 պետություններում, այդ թվում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում, Ավստրիայում, Ռուսաստանում, սկանդինավյան պետություններում, Բրազիլիայում, Ճապոնիայում, Թուրքիայում և այլ պետություններում[9]:

Կրոնական իրավունքի ընտանիքում իրավունքի հիմնական աղբյուրը «սրբազան տեքստն» է: Իրավունքի նորմերը տրված են ի վերուստ, հավիտենական են, անվիճելի և գրի առնված կրոնական բնագրերում: Այս ընտանիքում հիմնականում առանձնանում են Կանոնիկ իրավունքը, Իսլամական իրավունքը, Թալմուդական իրավունքը: Որոշ պետություններում իրավական համակարգերը կրում են Հինդու իրավունքի, Բուդդայական իրավունքի, Կոնֆուցիական իրավունքի տարրեր: Կրոնական իրավունքի տարրերը գերակշռում են Իրանում, ԱՄԷ-ում, Սաուդյան Արաբիայում, Կատարում, ինչպես նաև առանձնահատուկ դեր ունեն Իսրայելի, Հնդկաստանի, Ճապոնիայի և մի շարք այլ պետությունների օրենսդրական համակարգի կառուցվածքում[10]:

Սովորութային իրավունքի ընտանիքում իրավունքի աղբյուրը ավանդույթներն ու սովորույթներն են, որոնք իրավական կարգադրանքի ուժ ունեն: Այս տեսակի իրավունքն ունի տեղային բնութագիր, հիմնված է արդարության մասին ժամանակի ընթացքում ձևավորված գաղափարների վրա, գործում է և՛ մաքուր տեսքով (որպես միահամակարգ), օրինակ՝ Անդորրայում ու Ձերսիում (ՄԹ), և՛ այլ իրավական համակարգերի հետ համակցությամբ՝ Չինաստանում (մայրցամաքային իրավունքի հետ), ԱՄԷ-ում (իսլամական իրավունքի հետ), Քուվեյթում և Օմանում (մայրցամաքային իրավունքի և իսլամական իրավունքի հետ), Հնդկաստանում (ընդհանուր իրավունքի հետ) և այլն:

Հիբրիդային իրավունքի ընտանիքում համակցված են նշված ընտանիքների բնութագրական տարրերը: Հնդկաստանում, օրինակ, համակցված են ընդհանուր, մահմեդական և սովորութային իրավունքները, Կատարում՝ մայրցամաքային, ընդհանուր, մահմեդական և սովորութային իրավունքները: Հիբրիդային իրավական համակարգերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց ձևավորումը պատմական՝ գաղութային անցյալում տեղի ունեցած սոցիալ-քաղաքական մշակույթի բնական յուրացումն է կամ պարտադրված ընդունումը[11]:

---

[9] Մայրցամաքային իրավունքի ավանդույթներով պետությունների ամբողջական ցանկը տես “Civil Law Systems and Mixed Systems with a Civil Law Tradition”. World Legal Systems Research Group, University of Ottawa (http://www.juriglobe.ca/eng/sys-juri/class-poli/droit-civil.php):

[10] Տես *Н. П. Маюров.* Традиционные и религиозные правовые семьи в странах современного мира. «Социально-политические науки», 2017 (https://cyberleninka.ru/article/n/traditsionnye-i-religioznye-pravovye-semi-v-stranah-sovremennogo-mira/viewer):

[11] Տես *Kensie Kim.* Mixed Systems in Legal Origins Analysis. “Southern California

Համեմատական իրավունքը արդյունավետ հետազոտական գործիք է միջազգային և ներպետական իրավական համակարգերի փոխազդեցությունների, միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների ուսումնասիրություններում, եթե հաշվի առնենք, որ միջազգային, մասնավորապես՝ եվրոպական ինտեգրումային գործընթացներում կիրառվող պրակտիկ գործիքակազմի հիմքում իրավական զուգամիտումն* է: Իրավունքի զուգամիտումը տարբեր ազգային իրավական համակարգերի մերձեցման և փոխներթափանցման բազմավեկտոր գործընթաց է՝ հիմնված համընդհանուր սոցիալ-մշակութային, քաղաքական և տնտեսական գործոնների, համապիտանի իրավական սկզբունքների և չափանիշների, ինչպես նաև ներպետական իրավահարաբերություններում դրանց իրացման առանձնահատկությունների վրա, ինչի արդյունքը հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումների միջազգայնացումն ու ներդաշնակումն է[12]: Այս առումով նշանակալի է 1969 թ. ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովի մշակած Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի հռչակագիրը, որի 26-րդ՝ «Պայմանագրերը պետք է կատարվեն» (''Pacta sunt servanda'') և 28-րդ՝ «Ներքին իրավունքը և պայմանագրի կատարումը», հոդվածներով կարգավորվում է որպես միջազգային պայմանագրերի կողմ հանդես եկող պետությունների իրավական վարքը[13]:

Ս. Ս. Ալեքսեևը իրավական զուգամիտումը սահմանում է որպես իրավական համակարգերի զարգացում միևնույն ուղղությամբ, ինչի հետևանքով տեղի է ունենում իրավունքի փոխադարձ հարստացում, և վերջին հաշվով՝ իրավական համակարգերի յուրահատուկ ինտեգրում[14]:

Իրավական զուգամիտման երևույթը լավագույնս արտահայտվում է միջազգային իրավունքի մեխանիզմների գործադրման համատեքստում: Այս իմաստով դա տարբեր մակարդակների իրավահարաբերությունների կարգավորումն է միջազգային իրավունքի գործիքակազմի կիրառմամբ: Միևնույն ժամանակ, առանց միջազգային-իրավական միջոցների ձեռնարկման նույնպես հնարավոր է մի իրավական համակարգի տարրերի ներ-

Law Review“, 2010, Vol. 83:693 (https://weblaw.usc.edu/assets/docs/contribute/83_3KimforWebsite.pdf):

* Մասնագիտական գրականության մեջ համարժեքորեն կիրառվում են նաև «իրավունքի համամշակութացում», «իրավական համընդհանրացում», «իրավական ընդունում (reception)» տերմինները:

[12] Տես *A. Y. Mordovcev, T. V. Mordovceva, A. Y. Mamychev.* The Convergence of Law: The Diversity of Discourses. “Mediterranean Journal of Social Sciences”, May 2015, Vol. 6, N 3 (https://www.richtmann.org/journal/index.php/mjss/article/view/6247/5989):

[13] Տես «Венская конвенция о праве международных договоров». Принята 23 мая 1969 года (https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/law_treaties.shtml):

[14] Տես *Ю. С. Безбородов.* Конвергенция: правовой и международно-правовой подходы к определению. «Universum Juris», 2016, № 2 (http://www.universum-juris.org / ?q=ru%2Fnode%2F26&fbclid=IwAR3yboa6CqEY31UvDaixh1q11VHo2TXnnWibliF6oIZWk4aZBJwuFnJWyjU):

մուծում մյուսի մեջ: Դրա վառ օրինակ է Թուրքիայի իրավական համակարգի ապամահմեդականացումը, երբ 1920-ական թվականների սկզբին այս պետությունը փոխառեց մայրցամաքային Եվրոպայի պետությունների քաղաքացիական և քրեական օրենսգրքերի տարրերը, ինչի հետևանքով դարձավ ռոմանագերմանական ընտանիքի անդամ, և նույն կերպ Ճապոնիան, որը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին փոխառեց Գերմանիայի և Ֆրանսիայի կոդիֆիկացված իրավական ակտերը[15]: Եվս մեկ լավ օրինակ է ԱՄՆ-ի իրավական համակարգից «մեղքի ընդունման» (”*comparution sur reconnaissance préalable de culpabilité*”) սահմանակարգի ներթափանցումը ֆրանսիական քրեական իրավունքի մշակույթի մեջ [16]:

Անգլո-սաքսոնական և ռոմանագերմանական իրավական համակարգերի զուգամիտմանը նպաստում է եվրոպական աշխարհամասում երկու զարգացած խոշոր ինտեգրումային միավորների՝ Եվրոպական Միության և Եվրոպայի Խորհրդի ձևավորումը: Անգլո-սաքսոնական իրավունքի ազդեցության մեծացումը տեղի է ունենում բոլոր 47 անդամակցող պետությունների նկատմամբ մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերահսկողության ձևով, երբ Դատարանը մեկնաբանում է Եվրոպական իրավունքը և ապահովում դրա համընդհանուր կատարումը: Եվրոպական Խորհրդի արդարադատության դատարանն ընդունում է նախադեպային բնույթի իրավական ակտեր, որոնք անդամ պետությունների ազգային դատարանների կատարման համար սահմանում են համապարտադիր և հրամայական բնույթի նորմեր[17]: Միևնույն ժամանակ, Եվրոպական իրավունքում նկատվում է ֆրանսիական իրավական համակարգի յուրացում, մասնավորապես՝ Արդարադատության դատարանում գերագույն դատապաշտպանների սահմանակարգի ներդրումը[18]: Այսպիսով՝ այս երկու ընտանիքների իրավական մշակույթները զուգամիտում են Եվրոպական Միության հաստատությունների գործունեության դաշտում՝ կարգավորվելով երկրորդական իրավունքի ակտերի կատարման մեխանիզմով:

Անգլո-սաքսոնական և ռոմանագերմանական իրավական համակարգերի համեմատական վերլուծություն՝ «իրավունքի գերակայության» գաղափարի հիմքով

Փորձենք վերլուծել իրավունքի գերակայության վերաբերյալ ընդհանուր տեսական պատկերացումները և առանձնացնել դրա բնորոշման նկատմամբ հիմնական մոտեցումները:

---

[15] Տես նույն տեղում:

[16] Տես *G. Canivet.* The Interrelationship Between Common Law and Civil Law. “Louisiana Law Review”, Summer 2003, Vol. 63:

[17] Տես “La Justice Européenne”. Ministère de la Justice (http://www.justice.gouv.fr/europe-et-international-10045/la-justice-europeenne-10282/):

[18] Տես *Д. Т. Караманукян.* Влияние Европейского Союза на конвергенцию романо-германского и англосаксонского права. «Вестник Омского юридического института», 2012, № 1:

Այն, որ «իրավունքի գերակայություն» հասկացության իմաստը (բնորոշումը) և իրավագիտության հասկացությունների ու տեսական կառույցի համակարգում դրա տեղը բանավիճային պրոբլեմ է և պահանջում է տեսամեթոդաբանական ընդհանրացված մոտեցման ցուցաբերում, հաստատվում է «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2011 թ. մարտի 25–26-ը կայացած ընդհանուր նիստում ընդունված «Իրավունքի գերակայության մասին զեկույցով»[19]: Համաձայն այդ զեկույցի՝ ազգային ու միջազգային իրավական փաստաթղթերը, ինչպես նաև գիտնականների, դատավորների և այլ փորձագետների աշխատությունները վկայում են, որ ներկայումս գոյություն չունի «իրավունքի գերակայության» հիմնական իմաստի և տարրերի վերաբերյալ համաձայնություն (կոնսենսուս)[20]:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ «իրավունքի գերակայությունը»՝ որպես հասկացություն, չունի համընդհանուր հանրաճանաչություն, ի տարբերություն, օրինակ, «օրինականություն» կամ «օրենքի գերակայություն» իրավական հասկացություններից: Ազգային իրավական համակարգերից յուրաքանչյուրը, պայմանավորված իր առանձնահատկություններով, իրավագիտության մեջ յուրովի է իմաստավորում այն: Դա բացատրվում է բազմաթիվ գործոնների ազդեցությամբ, որոնց շարքում կարելի է նշել տվյալ իրավական համակարգի պատմական ու մշակութային զարգացման պայմանները, ժողովրդավարության, քաղաքականության և իրավական համակարգի յուրահատկությունները, իրավագիտության զարգացման մակարդակը: Այդ տեսանկյունից՝ իրավունքի տեսության մեջ աչքի են ընկնում երկու հայեցակարգեր՝ «իրավունքի գերակայության» անգլո-սաքսոնական հայեցակարգը և «իրավական պետության» մայրցամաքային հայեցակարգը: «Իրավունքի գերակայության» անգլո-սաքսոնական հայեցակարգը ձևավորվել է ազատականության՝ որպես քաղաքական իրավական հոսանքի ազդեցության ներքո: Անգլո-սաքսոնական ընդհանուր իրավունքը և ընդհանրապես իրավական համակարգը, ինչպես նշվեց, ձևավորել են դատավորները: Այդ իրավական երևույթի պատմական զարգացման յուրահատկությունները հանգեցրին այն բանին, որ սկզբում Անգլիայում, այնուհետև և ԱՄՆ-ում «իրավունքի գերակայության» գաղափարը առարկայացավ անկախ, ինքնավար դատական իշխանության համակարգում: Անգլո-սաքսոնական մշակույթի երկրներում դատարանը դարձավ անհատի և պետական իշխանության միջև միջնորդ: Հասարակական գիտակցության մեջ անհատի ինքնիշխանության գաղափարի արմատավորման և դրա իրավական ամրագրման հետևանքով դատարանը աստիճանաբար դարձավ անհատի իրավունքների երաշխավոր և ձեռք բերեց մեծ իշխանություն: Որպես արդյունք՝

[19] Տես “Report on the rule of law“. Strasbourg, 4 April 2011, Study N 512/2009 (https://rm.coe.int/1680700a61):

[20] Տես նույն տեղում, էջ 13:

ձևավորվեց «սահմանափակված պետության» գաղափարը[21]: Այս տեսանկյունից անգլո-սաքսոնական «իրավունքի գերակայությունն» ընդհանուր գծեր ունի մայրցամաքային «իրավական պետության» հայեցակարգի հետ: Հետևաբար, «իրավունքի գերակայության» անգլո-սաքսոնական հայեցակարգը կարելի է համարել իրավական պետության տեսության տարբերակ, որի առաջավոր տեսաբաններից է Ա. Վ. Դայսին[*]: Նա, հետազոտելով Բրիտանիայում սահմանադրական իրավակարգավորման առանձնահատկությունները, եկել է այն եզրակացության, որ չգրված բրիտանական սահմանադրությանը բնորոշ են հետևյալ երկու սկզբունքները: Առաջին և հիմնական սկզբունքն է «խորհրդարանի ինքնիշխանությունը կամ գերակայությունը *(“parliamentary sovereignty, parliamentary supremacy”)*», իսկ երկրորդը՝ «իրավունքի գերակայությունը»:

Ա. Դայսիի կարծիքով՝ իրավունքի գերակայությունը համատեղվում է խորհրդարանի ինքնիշխանության հետ, թեև Անգլիայում այն չի գերակշռում: Ա. Դայսին հենց իրավունքի գերակայությունում է տեսնում պետական իշխանության սահմանափակման հիմքերը: Նա «իրավունքի գերակայության» սկզբունքը համարում է երկար տարիներ գոյություն ունեցող ընդհանուր (նախադեպային) իրավունքի հետևանք, ինչի պատճառով չկար այն գրավոր սահմանադրությամբ ամրագրելու անհրաժեշտություն: Ըստ Ա. Դայսիի՝ իրավունքի գերակայությունն ունի երեք հիմնական հատկանիշներ.

1) պատիժ կարող է նշանակվել միայն օրենքի հստակ կերպով ամրագրված դրույթները խախտելու համար, ընդսմին դրանք չունեն հետադարձ ուժ... (հայեցողական լիազորությունները կարող են հանգեցնել կամայականության),

2) ոչ ոք չի կարող լինել օրենքից վեր, և հասարակության բոլոր խավերը պետք է հավասարապես ենթարկվեն օրենքին,

3) իրավունքի գերակայության գաղափարները պետք է բխեն ոչ թե գրված սահմանադրությունից, այլ ընդհանուր «նախադեպային» իրավունքից[22]:

Այսպիսով՝ Ա. Դայսիի մշակած «իրավունքի գերակայության» հայեցակարգն իր երեք բովանդակային բաղադրատարրերով վերաբերում է պետական իշխանությանը, հատկապես, որ Դայսին իրավունքի գերակայությունը համարում է չգրված բրիտանական սահմանադրության սկզբունք:

Մայրցամաքային Եվրոպայում «իրավունքի գերակայությունը» չունի միանշանակ մեկնաբանություն: Վենետիկի հանձնաժողովի վերը հիշատակված զեկույցում, ինչպես նաև քաղաքական իրավական մտքի պատմության

[21] Տես *В. Ф. Халипов.* Энциклопедия власти. М., 2005, с. 487:

[*] Ա. Վ. Դայսին Մեծ Բրիտանիայի սահմանադրական իրավունքի տեսաբան է, որը 1885 թ. հրապարակել է «Սահմանադրական իրավունքի հետազոտման ներածություն» աշխատությունը:

[22] Տես “Report on the rule of law“. Strasbourg, 4 April 2011, Study N 512/2009, PP. 3–4 (https://rm.coe.int/1680700a61):

մեջ անգլո-սաքսոնական «իրավունքի գերակայության» սկզբունքին կամ հայեցակարգին համարժեք է համարվում «իրավական պետության» հայեցակարգը: Անշուշտ, իրավական պետության տեսությունն սկսել է ձևավորվել անտիկ աշխարհում, սակայն «իրավական պետություն» *("Rechtsstaat")* տերմինը առաջարկել են 19-րդ դարի առաջին կեսի իրավաբաններ Կ. Թ. Վելկերը, Ռ. ֆոն Մոլը և ուրիշներ[23], ընդ որում, մայրցամաքային իրավունքի տեսությունն այդ հասկացությունը ձևարկել է՝ հենվելով իրավական պետության գերմանական հայեցակարգի վրա:

Մայրցամաքային իրավագիտական միտքը պետության իշխանության սահմանափակման պրոբլեմն իմաստավորել է պետության ինքնիշխանության և օրենքի կամ իրավունքի գերակայության հարաբերակցության համատեքստում[24]: Ինքնիշխանությունը ենթադրում է պետական գերագույն իշխանության իրավական կազմակերպություն, դրա իրացման իրավական կազմակերպվածք՝ հիմնված անհատի իրավունքների առաջնայնության վրա: Հետևաբար, պետություն – անհատ փոխհարաբերություններում պետությունը հանդես է գալիս որպես իրավաբանորեն կազմակերպված սուբյեկտ, որը պետք է գործի իրավական ձևերով և իրավունքին համապատասխան: Այս իմաստով, ի տարբերություն անգլո-սաքսոնական «իրավունքի գերակայության» հայեցակարգից, որում կարևոր դեր է հատկացվում դատարանին, մայրցամաքային տեսությունը կարևոր տեղ է հատկացնում օրենքին, իսկ իրավականության պահանջը վերաբերում է իշխանության բոլոր ճյուղերին (ըստ Ա. Դայսիի՝ անգլիական չգրված սահմանադրության երկրորդ սկզբունքը խորհրդարանի ինքնիշխանությունն է): Այսպիսով՝ մայրցամաքային իրավագիտական միտքը, շեշտադրելով օրենքը և դրա գերակայությունը, միևնույն ժամանակ օրենքը համարում է ոչ միայն պետության կամքի ձևական դրսևորում, այլև իրավական գաղափարի կենսագործում: Հետևաբար, իրավունքը, վերածննդի դարաշրջանի իրավաբանական աշխարհայացքին համապատասխանությամբ, ծագում է, նախ, որպես գաղափար, որն այնուհետև ձևայնացվում, ամրագրվում է իրավական նորմերում, ապա կենսագործվում է իրական, կենսական իրավահարաբերություններում, որոնց մասնակիցներն են լիիրավ իրավական սուբյեկտները: Այս պարագայում պետությունը ձեռք է բերում իրավական օրինականության խստագույն ձև:

Այս ամենապարզ մոտեցումից բացի, ժամանակի ընթացքում որպես իրավական պետության կայացման գործոններ դիտարկվել է նաև զարգացած քաղաքացիական հասարակությունը, ժողովրդավարությունը, սահմանադրության գերակայությունը: Որպես մարդու իրավունքների կայացման, իրավունքի գերակայության հաստատման, պետության կառուցվածքում իշխանությունների բաժանման սկզբունքի գործադրման արդյունք դրսևորվել է

[23] Տես *А. Н. Соколов*. Идея правового государства в Германии и механизм ее реализации. Диссертация докт. юрид. наук. Харьков, Украинская юридическая академия, 1992, сс. 22–23; *Վ. Ֆ. Խալիպով,* Նշ. աշխ., էջ 486:

[24] Տես *Վ. Ֆ. Խալիպով,* Նշ. աշխ., էջ 487:

այնպիսի միտում, ինչպիսին դատական իշխանության հեղինակության, դրա դերի ու նշանակության մեծացումն է: Այսպիսով՝ բարենպաստ պայմաններ են ստեղծվել մի կողմից՝ պետության, և մյուս կողմից՝ հանրային հատվածի (անհատի և քաղաքացիական հասարակության ձևաչափերով) իրավունքների հավասարակշռման համար՝ շնորհիվ դատական իշխանության՝ ինքնուրույնաբար, առանց պետության թելադրանքի գործելու հնարավորության:

«...Իրավական պետությունը՝ դրա արդի համընդհանուր տարածված իմաստով... նորագույն ժամանակի հատուկ պետական-իրավական կառույց է, հանրային քաղաքական ոլորտում իրավունքի տիրապետման գաղափարի իրականացման հատուկ (քաղաքացիական հասարակության պայմաններին և պահանջմունքներին համապատասխանող) մոդել, ազատ անհատների՝ որպես պաշտոնապես ճանաչված սուբյեկտների, ի ծնե և անօտարելի (բնական) իրավունքների և, միաժամանակ, քաղաքացու իրավունքների ու ազատությունների սուբյեկտների, հանրային-քաղաքական իշխանության զարգացած իրավական կազմակերպության հատուկ նոր ձև (և նոր տիպ)»[25]:

Անգլո-սաքսոնական և մայրցամաքային իրավական հայեցակարգերում մեզ հետաքրքրող պրոբլեմի հետազոտությունը հանգեցնում է այն եզրակացության, որ «իրավունքի գերակայություն» անգլիական տեսությունն ընդամենը «սահմանափակված պետության» հայեցակարգ է: Իսկ մայրցամաքային տեսությունն իր անվանումով արդեն հուշում է, որ վերաբերում է պետությանը կամ ենթադրում է պետության որոշակի կառույց: Այս տեսանկյունից՝ մայրցամաքային իրավական համակարգում իրավունքի գերակայության հասկացության ինքնուրույն գոյությունն իսկ դառնում է կասկածելի, քանի որ կա «իրավական պետություն» հասկացությունը: Հետևաբար իրավական զուգամիտումը, որը դիտվում է արդի աշխարհում, ենթադրում է, որ ապագայում կա՛մ անգլո-սաքսոնական իրավագիտությունը, հրաժարվելով «իրավունքի գերակայությունից», պետք է ընդունի «իրավական պետություն» հասկացությունը, կա՛մ հակառակը՝ մայրցամաքային տեսությունը պետք է հրաժարվի «իրավական պետություն» ձևակերպումից՝ ընդունելով «իրավունքի գերակայություն» բանաձևը: Սա համամիասնականացման ուղիով ընթացող աշխարհում իրավական զուգամիտման հնարավոր փոխզիջումային տարբերակն է: Սակայն, մեր կարծիքով, պրոբլեմը դրանով չի լուծվի երկու հիմնավոր պատճառով:

Առաջին պատճառը, թե ինչու ապագայում իրավական զուգամիտումը չի լուծի առաջ քաշված պրոբլեմը, իրավահասկացողությունն է: Ակնհայտ է, որ իրավական պետության գաղափարը երկու հայեցակարգերում էլ հենվում է պետության և իրավունքի ոչ միանշանակ ընկալման վրա: Սակայն պետք է նկատի ունենալ, որ ինչպես այդ գաղափարը, այնպես էլ արդի ժողովրդավարական իրավական համակարգերը հենվում են նաև իրավունքի և օրենքի տարբերակման մոտեցման վրա: Այդ դեպքում հիմնարար նշանա-

[25] Տես *Վ. Ա. Ներսեսյանց,* Իրավունքի և պետության տեսություն: Ե., 2001, էջ 110:

կություն ունի այն հանգամանքը, որ ընդհանուր փիլիսոփայական պատկերացմամբ իրավունքը բարձրագույն արժեք է՝ օժտված յուրահատուկ էությամբ և բովանդակությամբ, իսկ օրենքը իրավունքի էության և բովանդակության դրսևորումն է, արտահայտման ձևը:

Այստեղից էլ բխում է դրանց փոխհարաբերության և այդ փոխհարաբերության հիմքում դրված սկզբունքների պրոբլեմը: Ուստի իրավունքի գերակայության հասկացության հարցի լուծումը պետք է փնտրել իրավական համակարգի կամ իրավական կարգավորման համակարգի հարթությունում որպես իրավունքի սկզբունքի: Այսպիսով՝ իրավունքի գերակայությունը ոչ թե պետության հայեցակարգ է, այլ առաջին հերթին իրավական համակարգին և դրա գործողությանը վերաբերող հասկացություն: Իհարկե, դա չի նշանակում, թե իրավունքի գերակայության և պետության հայեցակարգի միջև կապ չկա: Իրավունքի գերակայությունը թեև կարող է ազդել պետության հայեցակարգի ձևավորման վրա, սակայն այն ենթադրում է շատ ավելի հարուստ ու լայն բովանդակություն և պահանջներ, քան ունի իրավական պետության հայեցակարգը:

Կարևոր է նաև հասկանալ, թե արդյոք իրավունքի գերակայությունը վերաբերում է միջազգային իրավունքին: Վենետիկի հանձնաժողովի հիշյալ զեկույցում, որտեղ իրավունքի գերակայությունը քննարկվում է պոզիտիվ իրավունքի հարթությունում, փաստվում է, որ իրավունքի գերակայության հայեցակարգը գոյություն ունի և' ազգային (ներպետական), և' միջազգային իրավունքի մակարդակներում[26]: Ապա զեկույցի հեղինակները ներկայացնում են իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրման և մեկնաբանման փորձերը միջազգային իրավական փաստաթղթերում՝ վկայակոչելով «Եվրոպայի Խորհրդի կանոնադրության» նախաբանը, «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի» նախաբանը, Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2007 թ. նոյեմբերի 23-ի «իրավունքի գերակայության սկզբունքը»՝ 1594 բանաձևը, և այլ միջազգային փաստաթղթեր[27]: Դրանցում ամենալայն մոտեցում է համարվում ԵԱՀԿ փաստաթղթերում ամրագրված հայեցակարգը: Տվյալ հարցում այս կազմակերպության դիրքորոշումները ամրագրված են իրավունքի գերակայության ոլորտում ԵԱՀԿ պարտավորություններին վերաբերող փաստաթղթերում: Համաձայն «1990 թ. Կոպենհագենի փաստաթղթի»՝ «իրավական պետություն» ոչ միայն նշանակում է ձևական օրինականություն, այլև ապահովում է ժողովրդավարական կարգերին հասնելու կարգավորվածություն և հերթականություն, արդարություն, որոնք հիմնված են մարդ անհատի՝ որպես բարձրագույն արժեքի լիակատար ճանաչման վրա և երաշխավորված համապատասխան կառույցներով ու հաստատություններով:

[26] Տես “Report on the rule of law“. Strasbourg, 4 April 2011, Study N 512/2009, P. 6 (https://rm.coe.int/1680700a61):

[27] «Իրավունքի գերակայություն» բանաձևն օգտագործող և դրա իմաստը մեկնաբանող այս և այլ միջազգային փաստաթղթերի մասին տես նույն տեղում, էջ 6–11:

Վերը թվարկված միջազգային իրավական փաստաթղթերի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք, իրավունքի գերակայությունն ընդունելով որպես սկզբունք, այն մեկնաբանում կամ ներկայացնում են որպես ներպետական իրավական կյանքի ոլորտներին վերաբերող պահանջների համակցություն: Այնինչ, եթե մենք իրավունքի և դրա արտահայտության ձևի հայեցակարգն ընդունում ենք որպես արդի իրավական համակարգերի կառուցման և գործողության հիմնարար դրույթ, ապա հարց է ծագում, թե արդյոք իրավունքի գերակայությունը նաև միջազգային իրավունքի սկզբունք չէ, որը վերաբերում է ոչ միայն պետությունների ներքին կառուցվածքի նկատմամբ հայեցակարգային մոտեցումներին, այլև միջազգային իրավունքի ձևավորմանը և գործողությանը:

Այսպիսով՝ իրավունքի գերակայությունը զուտ պետության հայեցակարգ դիտարկելը, մեր կարծիքով, անընդունելի է երկու հանգամանքի բերումով: Առաջինը, որ այդ մոտեցումը չի լուծում միջազգային և հատկապես մաքուր միջպետական իրավունքում իրավունքի գերակայության գործողության պրոբլեմը, և երկրորդը՝ այդ մոտեցումը, լինելով նեղ, չի լուծում իրավունքի գերակայության՝ որպես հասկացության գիտական պրոբլեմը զուտ իրավունքի իրավական հարթության մեջ կամ իրավունքի ներհամակարգային կառուցվածքում: Իսկ դա նշանակում է, որ անհրաժեշտ է մշակել իրավունքի գերակայության բանաձևի իմաստավորման նկատմամբ նոր մոտեցում, որի հիմք լինեն ոչ թե պետականագիտության մեթոդաբանությունը, այլ իրավափիլիսոփայական ուղղվածությամբ իրավունքի տեսության հարացույցները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Իրավունքը՝ որպես պետության ստեղծած ու պաշտպանած նորմերի համակցություն, անհատի, հասարակության և իսկը պետության կյանքի ու կենսագործունեության կարգավորման մեխանիզմի գործարկմամբ կազմում է զարգացած և պաշտպանված հասարակության կառուցման հիմքը:

Ճկուն ազգային իրավական համակարգը պետության ներքին և արտաքին անվտանգության ապահովման կարևոր բաղադրիչն է և որակյալ իրավահարաբերություններ կերտելու իրեն վերապահված դերը կատարում է զուտ այն դեպքում, երբ ներդաշնակ է առաջավոր հասարակություններին բնորոշ համամարդկային ու քաղաքակրթական արժեքներին: ՀՀ-ն, ակտիվորեն մասնակցելով միջազգային և տարածաշրջանային առևտրատնտեսական ու ռազմաքաղաքական ինտեգրումային գործընթացներին, մշտապես աշխատում է արձագանքել միջազգային իրավունքում տեղի ունեցող զարգացումներին և վերացնել դրանց ներմուծմանը խոչընդոտող հակասությունները: Քանի որ վերջին տարիներին ինտենսիվացող համընդհանրացման զարգացումները հանգեցնում են նաև իրավունքի համընդհանրացմանը, կամ զուգամիտմանը, հայ իրավագիտական մտքի համար կարևոր է հստակորեն հասկանալ մեր ազգային իրավական համակարգի առանձնահատկությունները և ընկալունակությունը, դրա կատարելագործման ասպարեզում «իրա-

վունքի գերակայության»՝ որպես ժողովրդավարական արժեքների իրացման հիմնարար դրույթի տեղն ու դերը:

Ինչպես հայտնի է, ՀՀ իրավական համակարգը գործում է մայրցամաքային իրավունքի ընտանիքի շրջանակում, սակայն զերծ չէ նաև մայրցամաքային իրավունքի և անգլո-սաքսոնական (ընդհանուր) իրավունքի զուգամիտման ազդեցություններից: Այս համատեքստում մեծ տեսական-կիրառական նշանակություն ունի իրավունքի գերակայության գաղափարի՝ որպես Եվրոպական իրավական տարածությունում գերիշխող քաղաքակրթական արժեքի վերլուծությունը համեմատական իրավունքի լույսով: Հուսով ենք, որ այդ ասպարեզում կատարված մեր սույն հետազոտությունը հետագա գիտական ուսումնասիրությունները խթանող համեստ փորձերից մեկն է:

ПРАВОВАЯ БЕЗОПАСНОСТЬ

АНАЛИЗ АНГЛО-САКСОНСКОЙ И РОМАНО-ГЕРМАНСКОЙ ПРАВОВЫХ СИСТЕМ В СВЕТЕ СРАВНИТЕЛЬНОГО ПРАВОВЕДЕНИЯ

А. Л. АСАТРЯН, кандидат юридических наук, доцент, первый заместитель Председателя Палаты адвокатов РА

РЕЗЮМЕ

Гибкая национальная правовая система – важный компонент обеспечения внутренней и внешней безопасности государства, который выполняет отведенную ему роль по созданию качественных правоотношений только в том случае, если находится в гармонии с общечеловеческими и цивилизационными ценностями, национальным правосознанием и традициями. Путем активного участия в международных и региональных торгово-экономических и военно-политических интеграционных процессах РА старается постоянно реагировать на происходящие в международном праве процессы и ликвидировать те противоречия, которые препятствуют их внедрению во внутриправовую сферу. Поскольку глобализационные процессы, которые в последнее время становятся все более интенсивными, приводят также к правовой глобализации или конвергенции различных правовых систем (семей), то представляется важным четкое понимание особенностей и восприимчивости нашего национального правового менталитета, места и роли «верховенства права» как фундаментального положения реализации демократических ценностей в сфере усовершенствования этой системы.

В настоящее время правовая система РА действует в рамках континентальной (романо-германской) правовой семьи, хотя и не лишена влияния конвергенции континентального и англо-саксонского

(общего) права. Конвергенции концепций англо-саксонского «верховенства права» и романо-германского «правового государства» способствует наличие в Европе двух крупных интегративных образований – Европейского Союза и Совета Европы. В этом контексте огромное теоретико-прикладное значение имеет анализ в свете сравнительного права идеи верховенства права как цивилизационной ценности, доминирующей на Европейском правовом пространстве.

LEGAL SECURITY

THE ANALYSIS OF ANGLO-SAXON AND ROMANO-GERMANIC LEGAL SYSTEMS IN THE LIGHT OF COMPARATIVE JURISPRUDENCE

A. L. ASATRYAN, PhD in Law, Associate Professor, First Deputy Chairman, Chamber of Advocates of the Republic of Armenia

SUMMARY

A flexible national legal system is a key component of ensuring domestic and external security of the state, and it fulfills its assigned role of building quality legal relations only when it is in harmony with universal and civilized values, nation's legal consciousness and traditions. While being an active participant in the international and regional trade-economic and military-political integration processes, the Republic of Armenia is constantly working to respond to the developments taking place in international law and eliminate the contradictions hindering their introduction into the internal legal sphere. As long as the globalization developments recently getting more intensive lead also to the globalization of law, or convergence of various legal systems (families), we find it of prime importance to clearly understand the features and receptivity of our national legal mindset, as well as the place and role of the "rule of law" as a fundamental provision for realizing democratic values in the realm of its improvement.

At present the RA legal system operates within the frameworks of the family of Continental law; however, it bears also the impacts of the convergence of Continental (Romano-Germanic) law and Anglo-Saxon (common) law. The existence of the European Union and Council of Europe, the two massive and well-developed integration formations in the European region, facilitates the convergence of the Anglo-Saxon "rule of law" and the Romano-Germanic "legal state" concepts. In this context the analysis of the idea of rule of law as a civilizational value dominant in the European legal space in the light of comparative law is of great theoretical and practical importance.